Արցախի ազատամարտիկներին

Պետական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական խորհուրդը (նախագահ՝ Մ. Կնյազչյան) երկու անգամ բերկրանք է պատճառել արցախցի երեխաներին՝ նոր տարվա առթիվ ամեն անգամ նրանց ուղարկելով խաղալիքներ: Որոշված էր դա կրկնել նաև 1992-ի նախօրյակին: Մեր կողմից սպասարկվող սկզբնական արհմիութենական կազմակերպությունների հատկացրած գումարներից դեռ անցյալ տարվա դեկտեմբերին խաղալիքներ էինք գնել: Բայց Արցախում իրադրության կտրուկ սրման կապակցությամբ փոխվեց նաև ավանդույթ դարձող այդ ծրագիրը: Որոշեցինք հավաքված գումարով նյութական ու ֆինանսական օգնություն ցույց տալ Արցախի ազատության համար մղվող կռիվներում վիրավորված ու Երևանի հիվանդանոցներում բուժվող ազատամարտիկներին: Խորհրդի կողմից ստեղծվեց երեք հոգուց բաղկացած հանձնաժողով, որն օրերս եղավ Մալաթիայի քաղաքային կլինիկական, Մարաշի օրթոպեդիայի և վնասվածքաբանության ինստիտուտի, Նորքի 3-րդ զանգվածի շտապ բուժօգնության քաղաքային կլինիկական և մայրաքաղաքի 4-րդ հիվանդանոցներում: Վիրավորվածներից 22 հոգու ցույց տրվեց դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 500-ական ռուբլի գումարով:

Հիվանդանոցներ կատարած այցելությունները ցույց տվին, որ հոգատարությունն Արցախում վիրավորված ազատամարտիկների նկատմամբ շատ ջերմ է, և նրանք անչափ գոհ են բուժանձնակազմերից: Չէ՞ որ կատարվում են բարդ վիրահատություններ, և շատերի կյանքն է փրկվում: Այդ համեստ ու հպարտ տղաները, որ մեր օրերի հերոսներն են, լրիվ ապաքինվելուց հետո նորից Արցախ կվերադառնան: Նրանք մի խնդրանք ունեն՝ մեզ ոչ թե դրամ, այլ փամփուշտ է պետք: Երկուսն էլ պետք են, իհարկե: Բանն այն է, սակայն, որ եթե բուժվողները երախտապարտ են, բուժող բժիշկները դժգոհ են՝ անհրաժեշտ դեղորայք չլինելու պատճառով: Օրինակ, Նորքի 3-րդ զանգվածի շտապ բուժօգնության քաղաքային կլինիկական հիվանդանոցում իսպառ բացակայում են ուղեղի արյան շրջանառության վերականգնմանը նպաստող դեղորայքները: Ու նաև մի հարց, որ կամենում եմ բարձրացնել: Մարտնչող Արցախից բերված մեր արյունակից տղաները բուժվում և դուրս են գրվում Երևանի հիվանդանոցներից, բայց, ցավոք, գալիս են նորերը, որոնք նույնպես օգնության խիստ կարիք ունեն: Միայն մեր օգնությունը չի բավականացնի: Ահա թե ինչու ցանկալի է, որ արցախանպաստ, ազգանպաստ այս բարեգործությանը լծվեն նաև մեր մյուս ճյուղային արհմիութենական խորհուրդները:

Եղենա ԱԿՈՊՈՎԱ

Պետական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական խորհրդի աշխատանքի պաշտպանության գլխավոր ինսպեկտոր